Հավելված N 3
ՀՀ կառավարության 2018 թվականի
ապրիլի 12 -ի N 405 - Ն որոշման

ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՄԱՏՈՒՑՎԱԾ ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ

1. Սույն կարգով սահմանվում են պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում նախազորակոչային (14-18 տարեկան), զորակոչային (18-27 տարեկան՝ ներառյալ պարտադիր զինվորական ծառայությունից առողջական վիճակի պատճառով վաղաժամկետ զորացրված և 27 տարին չլրացած), 27 տարեկանից բարձր տարիք ունեցող՝ ասպիրանտուրան ավարտած և զինվորական ծառայություն չանցած, ինչպես նաև պահեստազորում հաշվառված և պահեստազորային պատրաստության շրջանակներում պարտականությունների կատարմանը ներգրավվող քաղաքացիների բժշկական հաշվառման, առողջական վիճակի գնահատման, բժշկական հետազոտության անցկացման դիմաց առողջապահական կազմակերպություններին՝ իրենց կողմից բժշկական հանձնաժողովներում ընդգրկված մասնագետների աշխատանքի դիմաց փոխհատուցման և նշված մասնագետների վարձատրության, պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հիվանդանոցային հետազոտման, փորձաքննության և բուժման ուղեգրվող անձանց ճանապարհածախսի փոխհատուցման, ինչպես նաև պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հիվանդանոցային հետազոտման, փորձաքննության և բուժման նպատակով հիվանդանոցային բժշկական կազմակերպությունում գտնվելու ընթացքում սննդի տրամադրման կամ փոխհատուցման արժեքի չափը և տրամադրման կարգը:

2. Համապատասխան բժշկական հանձնաժողովներում ընդգրկված մասնագետների կողմից նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց բժշկական հաշվառման, առողջական վիճակի գնահատման, բժշկական հետազոտման անցկացման դիմաց առողջապահական կազմակերպություններին փոխհատուցելու և բժշկական հանձնաժողովներում ընդգրկված մասնագետների վարձատրության նպատակով պետական պատվեր տեղադրող մարմինն առողջապահական կազմակերպությունների հետ կնքում է համապատասխան պայմանագրեր:

3. Համապատասխան բժշկական հանձնաժողովներում ընդգրկված մասնագետների կողմից նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց բժշկական հաշվառման, առողջական վի-

ճակի գնահատման դիմաց առողջապահական կազմակերպություններին փոխհատուցումն ու բժշկական հանձնաժողովներում ընդգրկված մասնագետների վարձատրությունը կատարվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով տվյալ տարվա համար այդ նպատակով նախատեսված գումարների սահմաններում՝ տարեկան 8 ամսվա կտրվածքով:

4. Համապատասխան բժշկական հանձնաժողովներում ընդգրկված մասնագետների կողմից նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց բժշկական հաշվառման, առողջական վիճակի գնահատման դիմաց առողջապահական կազմակերպություններին ամենամյա փոխհատուցման և բժշկական հանձնաժողովներում ընդգրկված մասնագետների վարձատրության ամսական չափը սահմանվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանով:

5. Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հիվանդանոցային հետազոտման կամ բուժման ուղեգրվող նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց ճանապարհածախսի փոխհատուցում տրվում է սպասարկող ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների կողմից, որի չափը սահմանվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանով:

6. Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հիվանդանոցային հետազոտման կամ բուժման նպատակով հիվանդանոցային բժշկական կազմակերպությունում գտնվելու ընթացքում նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց սնունդը կամ դրա դիմաց փոխհատուցումը տրամադրվում է հետազոտություն կամ բուժում իրականացնող բժշկական հաստատության կողմից, որի չափը սահմանվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի հրամանով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ